

Քիւ 24480
Դեկտեմբեր 19, 1974

Հոգեշնորհ
Տ. Շառէն Վրդ. Աւետիբեան
Հովիւ Ս. Յովհաննէս Մկրտիչ Եկեղեցւոյ
Նախագահ Եփեական Խորհուրդի
Առաջնորդ.

Սիրելի Հայր Շառէն,

Դեկտեմբեր 19ին, ֆիլասելֆոյ մէջ մեզի հետ ձեր խորհրդ-
դակցութեան ընթացքին յայտնեցինք ձեզի թէ ինչ պէտք է ըլլայ
ձեր եւ օգնական հովիւ Տ. Միքայէլ Քնյ. Գութերոյի կացու-
թիւնը Եփեական Խորհուրդի ժողովներուն մէջ:

Հաւանական անորոշութեանց առաջը աննկու համար հետեւ-
եալ ուղեգիծը կը ներկայացնենք ի գործադրութիւն:

1.- Եփեական Խորհուրդի ժողովը իւրաքանչիւր նիստին կ'ու-
նենայ միայն մէկ հոգեւորական նախագահ, համաձայն Թեմական
Անոնադրութեան մէջ իրեն արուած իրաւասութեանց:

2.- Օգնական հովիւ ունեցող համայնքներուն մէջ, հովիւին
հետ ժողովի կը մասնակցին օգնական հովիւները, արտայայտու-
լու բայց ոչ բուկարկելու իրաւունքով:

3.- Հովիւի բացակայութեան, օգնական հովիւը ժողովին կը
մասնակցի հովիւ նախագահին իրաւասութիւններով:

4.- Եկեղեցւոյ Եփեական Խորհուրդին ենթակայ կազմակեր-
պութեանց եւ յանձնաժողովներու ժողովին կը նախագահէ երկն
մարմինին գաղափարաւոր նշանակուած հոգեւորականը: Իրմէ բա-
ցի, միւս հոգեւորականներուն ժողովի մասնակցութիւնը անհրա-
ժեշտ չէ:

Յայանեցինք ձեզի թէ անտղի է այն կարծիքը կամ ասարկու-
թիւնը թէ մէկէ աւելի հոգեւորականի ներկայութիւնը ժխական
Խորհուրդի ժողովին մէջ ժամապահառութիւն է, որուն փոխարէն
«հոգեւորական այցելութիւն» պէտք է ծրագրէ յաւելեալ հոգե-
ւորականը: Պաշտօնապէս համայնքին մէջ ծառայող հոգեւորական-
ները հաւասարապէս պատասխանատու են եկեղեցւոյ կեանքին, եւ
հետեւաբար ժխական Խորհուրդին հետ միասին պէտք է ծրագրեն
եւ բոլոր կողմակերպութեանց գործունէութեան վերահսկեն:

Սիրոյ ողորունքի

ԹՈՐԳՈՄ ԱՐԸՆԳԻՍՏԱՐԳՈՍ
Առաջնորդ

Օրինակ՝ Տ. Միքայէլ ԸՆՆՂ. Գուծերոյին
ժխական Խորհուրդի անենապետին

Քիւ 25861
Յուլիս 7, 1977

Հոգեշնորհ
Տ. Կառէն Ե. Վրդ. Աւետիբեան
Հովիւ Ս. Յովհաննէս Մկրտիչ Եկեղեցւոյ
Նախագահ Երեւան Խորհուրդի
Տիժրոյթ.

Սիրելի Հայր Կառէն,

Առաջած ենք Յուլիս 2, 1977 թուակիր ձեր նամակը՝ Եկեղեցւոյ Կոմիտաս Դարաց Դասի կազմութեան 50-ամեակի հանդիսութեան կապակցութեամբ:


Ար ցաւինք որ անձնապէս պիտի չկարենանք ներկայ գրանրիլ այս առնչութեան, նախապէս կարգադրուած ժամադրութեանց պատճառաւ: Մեր Օրհնութեան Գիրք ձեր որոշած թուականէն առաջ կը դրկենք ձեզի:

Այս առնչութեամբ պիտի գրենք Ամենայն Հայոց Սրբազնագոյն Աթոռակոսին՝ խնդրելով որ ինք եւս բարեհաճի Օրհնութեան Գոնդակ մը շնորհել Եկեղեցւոյ Դարաց Դասի 50-ամեայ յորելեանին առթիւ:

Սիրոյ ողջունիւ

ՔՈՐԳՈՄ ԱՐԷՆԳՈՍԿՈՂՈՍ
Առաջնորդ

ՄԲ. ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄԿՐՏԻՉ ՀԱՅՑ. ԵԿԵՂԵՑԻ
ՍԵՍԱԳՈՅՆ ՏԻՔՐՈՑԻ



St. John's Armenian Church
OF GREATER DETROIT

Very Rev. Fr. Baret Yeretzian
Clergyman In Residence

Very Rev. Fr. Paren Avedikian
Pastor

Rev. Fr. Michael Buttero
Assistant Pastor

22001 NORTHWESTERN HIGHWAY

PHONE: 356-1910

SOUTHFIELD, MICHIGAN 48075

Յուլիս 1, 1977

Գերաշնորհ
Տ. Քորգոմ Արք. Մանուկեան
Առաջնորդ Հիւսիսային Ամերիկայի
Առաջնորդարան Հայոց
Նիւ Եօքք, Ն. Ե.

Գերաշնորհ Սրբազան Հայր,

Մեծագոյն Տիթրոյթի Ս. Յովհաննէս Մկրտիչ Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ Կոմիտաս Դպրաց Դասը կը պատրաստուի իր կազմութեան Յիսնամեայ Յոբելեանը տօնխմբել Կիրակի, Սեպտեմբեր 25, 1977-ին: Կոմիտաս Դպրաց Դասին եւ Եկեղեցւոյս Միական Խորհուրդին փափաքն է հրաւիրել Ձեզ որպէսզի մատուցանէք օրուան Ս. Պատարագը եւ նախագահէք նոյն օր յետ միջօրեին կայանալիք Յոբելեանական Հանդիսութեանց: Եկեղեցւոյս Դպրաց Դասը այս առթիւ կը պատրաստուի յուշամատեան մը հրատարակելու եւ առ այդ իմ միջոցով կը խնդրէ Ձերդ Սրբազնութենէն Օրհնութեան Գիր մը յուշամատեանին մէջ գետնդնելու համար: Եթէ նոր նկար մը ունիք պատշաճ պիտի ըլլայ զայն եւս դրկել յուշամատեանին համար:

Կը խորհիմ թէ Յիսնամեայ Յոբելեանին կապակցութեամբ եւ խրատուսելու համար Եկեղեցւոյս Դպրաց Դասը, պատշաճ պիտի ըլլայ նաեւ խնդրել Ազգիս Վեհափառ Հայապետէն Օրհնութեան Կոնդակ մը, գնահատելու համար Ամերիկահայ Եկեղեցիներու մէջ եզակի ծառայութիւնն ու նպաստը եկեղեցւոյս Կոմիտաս Դպրաց Դասին:

Կոնդակին կապակցութեամբ կ'ուզեմ յիշել հետեւեալ տուեալները Կոմիտաս Դպրաց Դասին պատմութեան մէջ: Հիմնուած է ան 1927-ի Սեպտեմբերին: Անցեալ յիսուն տարիներու ընթացքին ունեցած է երեք դպրապետներ, Յարութիւն Սարկաւազ էքիզեան, Տօթթ. Հէրրի Պէկեան, եւ Արա Սարկաւազ Հայկ: Անոր երկրորդ տարիներու ծառայութիւնն ունեցող երգահանահարները եղած են հետեւեալները, Ալմաս Գիւրգեան-Պօյաճեան, Մէրի Սէֆէրեան-Դիլիշ, Անիթա Տուրոտեան-Թուրքեան, Ալիս Վարդապետեան-Վէտեան, Շառլիշ Գզիբեան-Արիկեան, Լուիզ Սարգիսեան-Շարտումեան եւ Միշել Մինօեան: Այս կապակցութեամբ իրենց երկարամեայ ծառայութեան համար կ'արժէ յիշատակել Եկեղեցւոյս Ս. Սեղանին սպասարկող հետեւեալ անձերը, Յարութիւն Սարկաւազ էքիզեան, Ալէք Սարկաւազ Մանուկեան, Արա Սարկաւազ Հայկ, Դանիէլ Սարկաւազ Շահան, Խաչիկ Սարկաւազ Սէմիզեան, Միհրան Կիսասարկաւազ Հոփլամազեան, Յակոբ Կիսասարկաւազ Ճանոյեան, Լեւոն Սարկաւազ Ջէնեան, Ուրարակիր Յակոբ Ասատուրեան, դպիր Մասէ Գարման, եւ Տիգրան Կիսասարկաւազ Նորսիկեան: Կոմիտաս դպրաց Դասիս հիմնադիր անդամներէն

ՍԲ. ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄԿՐՏԻՉ ՀԱՅՑ. ԵԿԵՂԵՑԻ
ՄԵՏԱԳՈՑՆ ՏԻՔՐՈՑՔԻ



St. John's Armenian Church
OF GREATER DETROIT

Very Rev. Fr. Baret Yeretzian
Clergyman In Residence

Very Rev. Fr. Paren Avedikian
Pastor

Rev. Fr. Michael Buttero
Assistant Pastor

22001 NORTHWESTERN HIGHWAY



PHONE: 356-1910



SOUTHFIELD, MICHIGAN 48075

Հետեւեալ երեք անձերը կը շարունակեն իրենց կանոնաւոր մասնակցութիւնը
բերել դպրաց դասինս երգեցողութեան, Յարութիւն Սարկաւազ էֆիգեան,
Կարապետ Պօյաճեան եւ Նուարդ Գգիրեան:

Կը խորհիմ թէ այսքանը բաւարար է թէ Ձեր Արքայութեան Օրհնութեան
Գիրին եւ թէ Վեհափառ Հայրապետի Կանոնակին կապակցութեամբ: Եթէ կարենանք
վերոյիշեալ զոյգ գիրբը Օգոստոսի վերջաւորութեան ձեռք ձգել, կրնանք
զանոնց տպել յուշմատեանին մէջ:

Ներկայացնելով սոյն խնդրանքը Ձեր ուշադրութեան եւ սպասելով Ձեր
բարեհաճ տնօրենութեանց, մնամ՝

Միշտ Ձերը, խոնարհ Սիրով՝
Fr. Michael Buttero
Փառէմ Ս. Կաթող. Աւետիքեան
Հոգեւոր Հովիւ

Քիւ 25862
Յուլիս 7, 1977

Հոգեշնորհ
Տ. Փառէն Ծ. Վրդ. Աւետիքեան
Հովիւ Ս. Յովհաննէս Մկրտիչ Եկեղեցւոյ
Նախագահ Ժեսկան Խորհուրդի
Տիֆրոյթ.

Սիրելի Հայր Փառէն,

Առաջած ենք Յուլիս 1, 1977 թուակիր ձեր նամակը:

Տրուած ըլլալով որ Հայց. Եկեղեցւոյ Երիտասարդաց
Կազմակերպութեան Տարեկան Ժողովի եւ մարզական շաբաթ-
թավերջի յայտագրի եւ ժամանակացոյցի մանրամասնութեանց
դուք տեղեակ էք, համեցէք ճշդել Ժեսկան Խորհուրդիդ
հետ մեր հանդիպումին յարմարագոյն ժամը եւ տեղեկացնել
մեզի:

Պիրակի Սեպտեմբեր 4ին կը մատուցանենք Ս. Գաաբազը
եւ կը քարոզենք Եկեղեցւոյդ մէջ:


Ցիշեալ ժողովի եւ մարզական շաբաթավերջի մասնակցու-
թեան համար շրջաբերական մը պիտի դրկենք մեր հոգեւո-
րականներուն:

Սիրոյ ողջունիւ

ՔՐԻՏՈՍ ԱՐՔԵՂԻՍԿՈՒՅԱՍ
Առաջնորդ

ՄԲ. ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄԿՐՏԻՉ ՀԱՅՑ. ԵԿԵՂԵՑԻ
ՄԵՍԱԳՈՆՆ ՏԻՔՐՈՑԻ

St. John's Armenian Church
OF GREATER DETROIT



Very Rev. Fr. Baret Yeretzian
Clergyman In Residence

Very Rev. Fr. Paren Avedikian
Pastor

Rev. Fr. Michael Buttero
Assistant Pastor

22001 NORTHWESTERN HIGHWAY



PHONE: 356-1910



SOUTHFIELD, MICHIGAN 48075

Յուլիս 1, 1977

Գերաշնորհ
Տ. Թորգոմ Արք. Մանուկեան
Առաջնորդ, Հիւսիսային Ամերիկայի
Առաջնորդարան Հայոց,
Նիւ Եօրք, Ն. Ե.

Սրբազան Հայր,

Այսու գրով յանուն Ս. Յովհաննէս Մկրտիչ Եկեղեցւոյ Միական Խորհուրդին կու գամ պաշտօնապէս հրաւիրել Ձեզ ներկայ գտնուելու Օգոստոս 31-ին Սեպտեմբեր 5 Տիթրոյթի մէջ կայանալիք Հայաստանեայց Եկեղեցւոյ Երիտասարդաց Կազմակերպութեան Տարեկան Ժողովին եւ Մարզական Մարաթափերշի ձեռնարկին: Միական Խորհուրդս կ'ակնալէ որ Ձեր վերոյիշեալ այցելութեան ժամանակ առիթ մը պիտի գտնէք Միական Խորհուրդին հետ հանդիպելու առանձնաբար, եթէ կրնաք կանխաւ ճշդել սոյն հանդիպումին ժամանակը, մեզ մեծապէս գոհ կը ձգէք:

Պիտի ուզէինք նաեւ որ Կիրակի Սեպտեմբեր 4-ին Ս. Պատարագը Դուք մատուցանէիք եւ Դուք ըլլալիք օրուան քարոզիչը, թէեւ կրնաք ազատ զգալ սոյն իրաւունքը այցելու ալ եկեղեցականի մը եւ կամ եկեղեցականներու յանձնել, պայմանաւ որ Արիս Եպիսկոպոսը չըլլայ այդ անձը եւ կամ անոնցմէ մին:

Այս առթիւ կ'ուզէի համեստաբար թելադրել Ձեզի շրջաբերականով մը հրահանգել թեմիս հոգեւորականներուն որ գոնէ ներկայ գտնուին Հ.Ե.Ե.Կ. համաժողովին, քաջալերելու համար վերակազմեալ Կազմակերպութեան անդամները եւ հետաքրքրութիւն ստեղծելու համար իրենց ծուխերուն մէջ սոյն Կազմակերպութեան նկատմամբ:

Յուսալով որ կ'ընդառաջէք սոյն հրաւերներուն եւ տեղեակ կը պահէք զիս եւ Միական Խորհուրդս Ձեր տնօրենութեանց եւ մաղթելով Ձեզի քաջառողջութիւն, մնամ

Միշտ Ձերդ, խոնարհ՝ Սիրով՝
Թորգոմ Արք. Մանուկեան
Փառէն Ս. Վրդ. Աւետիքեան
Հոգեւոր Հովիւ



ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ

DIOCESE OF THE ARMENIAN CHURCH OF AMERICA, 630 SECOND AVENUE, NEW YORK, N. Y. 10016 212 686-0710

ARCHBISHOP TORKOM MANCOBIAN, PRIMATE

Մայիս 31, 1977

Հոգեշնորհ

Տ. Գառէն Ծ. Վրդ. Աւետիքեան
Հովիւ Ծ. Յովհաննէս Մկրտիչ Եկեղեցւոյ
Նախագահ Սխական Խորհուրդի
Տիբրոյթ.

Սիրելի Հայր Գառէն,

Նորոգ հանգուցեալ Հայկ Գավուրճեան 102 տարեկան պիտի ըլլար այս տարեկան Օգոստոսին: Եւրջ բառասունըհինգ տարիներ յօգուտ իր ազգին եւ եկեղեցիին կատարած իր դրական ծրագրումներուն, սրտեռանդն ջանքերուն եւ իրագործումներուն ամենէն գեղեցիկ կոթողը պիտի մնայ Մայր Տաճարի, Մշակութային Կեդրոնի եւ Առաջնորդարանի համալիրի կառուցումը նիւ Եորք քաղաքի սրտին վրայ:

Լուսահոգի Հայկ Գավուրճեան իր կեանքի մինչեւ վերջին պահը մտածեց եւ աշխատեցաւ կերպն ու միջոցը գտնել Մայր Տաճարի պարտուց բարձման: Այս մեծ բարերարին շունչը դժբախտաբար յանկարծ սպառեցաւ, առանց լրացնել կարենալու իր այդ առաջադրութիւնը:

Իր մեկնումով ձգուած այս խոշոր բացը կամրջելու համար Առաջնորդարանէն ներս նոր ծրագրումներով զբաղեցան Հայկ Գավուրճեանի անձն ու ոգին յարատեւ վառ պահելու նախանձախնդիր բարեկամներ: Անոնք, յետ լուրջ խորհրդածութեան, յառաջացուցին Կեդրոնական Գործադիր Մարմին մը, որուն կազմի անդամներն են.

- | | |
|---------------------------|---------------------|
| Տիար Տատուր Տատուրեան | Ատենապետ |
| Տիար Սուրէն ֆէսմեան | Գանձապահ |
| Տիար Եղուարդ Պաշեան | Բ. Գանձապահ |
| Տ. Գառնիկ Բհնյ. Հալլամեան | Քարտուղար |
| Տ. Առնակ Բհնյ. Գասպարեան | Բ. Քարտուղար |
| Տիար Բիչըրտ Գ. Կրէկըրի | Օրինական Խորհրդատու |

Կեդրոնական Գործադիր Մարմինը կազմեց Հայկ Գավուրճեանի ոգեկոչման կարգացոյց մը, որուն գործադրութեան ընթացք պիտի տրուի սոյն թուականէն մինչեւ Օգոստոս 20, որ ծննդեան թուականն է ողբացեալ Հայկ Գավուրճեանի:

Յանձնախումբի նպատակն է ապահովել 102 անձեր որոնք տրամադիր ըլլան իւրաքանչիւրը 1000 --մէկ հազար-- տուար նուիրել, եւ գտնել 1000 անձեր որոնցմէ իւրաքանչիւրը 102 --հարիւր երկու-- տուար յանձն առնէ նուիրել Հայկ Գավուրճեանի յիշատակին:

Մնացեալ պարտքի գումարն է 750,000 --եօթը հարիւր յիսուն-- հազար տուար, որուն ղիմաց դրամատան մէջ ունինք միայն 150,000 --հարիւր յիսուն հազար-- տուար՝ որ մէկ տարուան վճարումն է:

Սոյն նպատակին կարեւորութիւնը նկատի ունենալով կը յանձնարարենք.


1. Հոգեհանգստեան Պաշտօն կատարել մեր թեմի եկեղեցիներուն մէջ Հայկ Գավուրճեանի հոգւոյն համար, անոր մահուան քառասունքին առթիւ, Յունիս 5էն մինչեւ Յունիս 26, ըստ յարմարութեան:

2. Կազմել տեղական յանձնախումբ մը հետապնդելու համար առաջադրուած նպատակը: Յանձնախումբի անդամներուն անունները համեցէք մեզի դրկել մինչեւ Յունիս 16: Եթէ փափաքին, համայնքներ կրնան քառասունքի Հոգեհանգիստէն յետոյ մատաղի ծաշ հրամցնել ներկաներուն, եւ այդ առիթով բացատրել նպատակը եւ ծրագիրը կազմուած յանձնախումբին: Նուէրները պէտք է նախնորդարան դրկուին նուիրատուներու հասցէներով:

3. Ձեր համայնքին մէջ համեցէք գտնել 150 անձեր, որոնցմէ իւրաքանչիւրը փափաքի 102-ական տուար նուիրել Հայկ Գավուրճեանի յիշատակին, Ս. Վարդան Մայր Տաճարի պարտուց բարձման համար:

Լիայոյս ենք որ Կեդրոնական Գործադիր Մարմնի այս սկզբնական աշխատանքներուն սատար հանդիսանալու համար, մեր հոգեւոր հովիւներն ու ծխական խորհուրդները բարենախանձութեամբ պիտի կատարեն յիշեալ ոգեկոչումները եւ պիտի անպայման արդիւնաւորեն նուիրահաւաքման գործը: Այսպէսով լաւագոյնս արտայայտած պիտի ըլլանք մեր սէրը ``Համայնքի նահապետ`` պատուանունով ճանչցուած Հայկ Գավուրճեանին, որուն հոգին երկնային լոյսերու մէջէն կը հետեւի մեր համադրեալ ջանքերուն:

Սիրոյ ողջունիւ



ԹՈՐԳՈՍ ԱՐՔԵՊՈՍԿՈՊՈՍ

Առաջնորդ

Քիւ 25861

Յուլիս 7, 1977

Հոգեշնորհ
Տ. Գառն Ե. Վրդ. Աւետիբեան
Հովիւ Ա. Յովհաննէս Մկրտիչ Եկեղեցեց
Նախագահ Երեւան Խորհուրդի
Տիբրոյթ.

Սիրելի Հայր Գառն,

Առաջած ենք Յուլիս 2, 1977 թուակիր ձեր նամակը՝ Եկեղեցւոյդ Պոմիասա Դպրաց Դասի կազմութեան 50-ամեակի հանդիսութեան կապակցութեամբ:

Պը ցաւիք որ անձնազէս գիտի չկարենանք ներկայ գրանելի այս առակատարութեան, նախազէս կարգադրուած ժամադրութեանց դատմառու: Մեր Օրհնութեան Գիրը ձեր որդած թուականէն առաջ կը դրկենք ձեզի:

Այս առնչութեամբ գիտի գրենք Ամենայն Հայոց Արքազնագոյն Կաթողիկոսին՝ ինչպէս յով որ ինք եւս բարեհաճի Օրհնութեան Գոնդակ մը շնորհել Եկեղեցւոյդ Դպրաց Դասի 50-ամեայ յորելեանին առթիւ:

Սիրոյ ողջունելի

ԹՈՐԳՈՄ ԱՐՇԵՂԻՍԵԱՌԳԱՍ

Առաջնորդ



ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ

DIocese of the Armenian Church of America, 630 Second Avenue, New York, N. Y. 10016 212 696-0710

ARCHBISHOP TORKOM MANOOGIAN, PRIMATE

Թիւ 25363
Յուլիս 7, 1977

Նորին Սուրբ Օծուծիւն
Տէր Տէր Վազգէն Առաջին
Սրբազնագոյն Կաթողիկոս Ամենայն Հայոց
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին.


Վեհափառ Տէր,

Տիժրոյթի Ս. Յովհաննէս Մկրտիչ Եկեղեցւոյ Հովիւն ու ծխական Խորհուրդը կը պատրաստուին տօնախմբելու Եկեղեցւոյ Կոմիտաս Դպրաց Դասի կազմութեան 50-ամեայ յօրելեանը:

Այս տօնակատարութիւնը տեղի պիտի ունենայ Կիրակի Սեպտեմբեր 25, 1977ին: Այս առթիւ պիտի հրատարակուի Յուշամատեան մը: Կը խնդրուի որ Ձերդ Սրբութիւնը բարեհաճի Օրհնութեան Կոնդակ մը շնորհել Կոմիտաս Դպրաց Դասի 50-ամեակին առթիւ:

Ս. Յովհաննէս Մկրտիչ Եկեղեցւոյ Կոմիտաս Դպրաց Դասը հիմնուած է Սեպտեմբեր 1927ին, եւ մինչեւ այսօր կը շարունակէ իր մասնակցութիւնը բնակչական կիրակնօրեայ եւ տօնական օրերու արարողութեանց: Դպրաց Դասի հիմնադիր Կոնդակներէն երեքը, Յարութիւն Սրկ. Էքիզեան, Կարապետ Պօյաճեան եւ Նուարդ Գգիրեան, տակաւին կը շարունակեն իրենց կանոնաւոր մասնակցութիւնը բնակչական դպրաց դասի երգեցողութեան: Տիար Ալեք Մանուկեան եւս մաս կազմած է յիշեալ դպրաց դասին եւ սպասարկած Ս. Խորանին:

Եթէ Ձերդ Սրբութիւնը յարմար նկատէ Օրհնութեան Կոնդակ շնորհել, կը խնդրուի որ մինչեւ Օգոստոսի կէսերը ստացուած ըլլայ՝ որպէս զի Յուշամատեանին մէջ եւս տպագրուի:

Մատչիմք ի համբոյր Վեհիղ Օծեալ Աջոյ
Խոնարհաբար

ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
Առաջնորդ